4400	1.4 ՍՈՒՔԱՐԴԻԱԼԱՆԻՐ (տող4410+տող4420)	x		461 605 300,00	461 605 300,00	461 605 300,00	461 605 300,00	461 605 300,00	461 605 300,00	x	109 952 068,00	109 952 068,00		x
	այդ թվում													
4410	ՍՈՒՔԱՐԴԻԱԼԱՆԻՐ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՆԱՐԱՐՈՒ) ԿԱԶՄԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ (տող4411+տող442)	x		461 605 300,00	461 605 300,00	461 605 300,00	461 605 300,00	461 605 300,00	461 605 300,00	x	109 952 068,00	109 952 068,00		x
	դրից													
4411	-Սուբսիդիաներ ու ֆինանսական պետական (համարային) կազմակերպություններին	4511		461 605 300,00	461 605 300,00	461 605 300,00	461 605 300,00	461 605 300,00	461 605 300,00	x	109 952 068,00	109 952 068,00		x
4412	-Սուբսիդիաներ ֆինանսական պետական (համարային) կազմակերպություններին	4512		0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	x	0,00	0,00		x
4420	ՍՈՒՔԱՐԴԻԱԼԱՆԻՐ ՈՐ ՊԵՏԱԿԱՆ (ՈՐ ՀԱՄԱՆԱՐԱՐՈՒ) ԿԱԶՄԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ (տող4421+տող4422)	x		0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	x	0,00	0,00		x
	դրից													
4421	-Սուբսիդիաներ ու պետական (ու համարային) ու ֆինանսական կազմակերպություններին	4521		0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	x	0,00	0,00		x
4422	-Սուբսիդիաներ ու պետական (ու համարային) ֆինանսական կազմակերպություններին	4522		0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	x	0,00	0,00		x
4500	1.5 ԴՆԱՄԱՆԱՐՈՒՆԵՐ (տող4510+տող4520+տող4530+տող4540)			0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	x	0,00	0,00		x
	այդ թվում													
4510	ԴՆԱՄԱՆԱՐՈՒՆԵՐ ՕՏԱՐԱՐՈՒՐՔԱՆ ԿԱԶՄԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ (տող4511+տող4512)	x		0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	x	0,00	0,00		x
	դրից													
4511	-Ընթացիկ դրամաշնորհներ օտարերկրյա կառավարություններին	4611		0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	x	0,00	0,00		x
4512	-Կապիտալ դրամաշնորհներ օտարերկրյա կառավարություններին	4612		0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	x	0,00	0,00		x
4520	ԴՆԱՄԱՆԱՐՈՒՆԵՐ ՄԻՋԱԿԱՐԱՐՈՒՆԵՐՆ (տող4521+տող4522)	x		0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	x	0,00	0,00		x
	դրից													
4521	-Ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին	4621		0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	x	0,00	0,00		x
4522	-Կապիտալ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին	4622		0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	x	0,00	0,00		x

[illegible]

4632	- Իրական, մակերեսային և սպորտային նպաստներ բրդեցից	4727		0.00	0.00	0.00	X	0.00	0.00	X	0.00	0.00	X
4633	- Բնակարանային նպաստներ բրդեցից	4728		0.00	0.00	0.00	X	0.00	0.00	X	0.00	0.00	X
4634	- Այլ նպաստներ բրդեցից	4729		12 000 000.00	12 000 000.00	12 000 000.00	X	12 000 000.00	12 000 000.00	X	1 525 000.00	1 525 000.00	X
4640	ԿԵՆՍԱԹՈՇՈՒՄԱՆԵՐ (տող4641)	X		0.00	0.00	0.00	X	0.00	0.00	X	0.00	0.00	X
	դից												
4641	- Կենսաթափաններ	4741		0.00	0.00	0.00	X	0.00	0.00	X	0.00	0.00	X
4700	1.7 ՍՆԱԼ ՍՆԱՍԵՐ (տող4710+տող4720+տող4730+տող4740+տող4750+տող4760+տող4770)	X		53 611 500.00	58 611 500.00	2 224 420.00	0.00	2 224 420.00	26 224 420.00	0.00	1 179 350.00	1 179 350.00	0.00
	այդ թվում												
4710	ԵՎԻԴԱՏԱԿԱԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ (ՀԱՍԱՐԿԱՎԱՆ) ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող4711+տող4712)	X		2 500 000.00	2 500 000.00	3 016 420.00	X	3 016 420.00	3 016 420.00	X	340 000.00	340 000.00	X
	դից												
4711	- Տնային տնտեսություններին ծառայողներ (ստացող շահույթ չկատարող) կազմակերպություններին, կոմսոցմուսներին	4811		0.00	0.00	0.00	X	0.00	0.00	X	0.00	0.00	X
4712	- Վիճակագրությունը այլ շահույթ չկատարող կազմակերպություններին	4819		2 500 000.00	2 500 000.00	3 016 420.00	X	3 016 420.00	3 016 420.00	X	340 000.00	340 000.00	X
4720	ՀԱՄԱԿԱՐԳԱՆ ՏԱՐԻՔԻ ՄԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՄԱԿԱՆԱԿԱՆ ՎԱՍՏԱՍԿԱՆ (տող4721+տող4722)	X		1 600 000.00	1 600 000.00	1 696 500.00	X	1 696 500.00	1 696 500.00	X	214 350.00	214 350.00	X
	դից												
4721	- Աշխատավարձի ֆոնդ	4821		0.00	0.00	0.00	X	0.00	0.00	X	0.00	0.00	X
4722	- Այլ հարկեր	4822		900 000.00	900 000.00	996 500.00	X	996 500.00	996 500.00	X	193 000.00	193 000.00	X
4723	- Պարտադիր վճարներ	4823		700 000.00	700 000.00	700 000.00	X	700 000.00	700 000.00	X	21 350.00	21 350.00	X
4724	- Պետական հաշվառող տարբեր մակարդակների կողմից վճարվող նպաստներ կիրառվող տույժեր	4824		0.00	0.00	0.00	X	0.00	0.00	X	0.00	0.00	X
4730	ԲԱՏԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏՈՒՆԱԿԱՆ ՎԱՍՏԱՍԿԱՆ (տող4731)	X		0.00	0.00	0.00	X	0.00	0.00	X	0.00	0.00	X
	դից												
4731	- Պատրաստվող կողմից նրանական տույժեր և տուգանքներ	4831		0.00	0.00	0.00	X	0.00	0.00	X	0.00	0.00	X
4740	ԲԱՏԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏՈՒՆԱԿԱՆ ՎԱՍՏԱՍԿԱՆ (տող4741+տող4742)	X		0.00	0.00	0.00	X	0.00	0.00	X	0.00	0.00	X
	դից												
4741	- Բնական տնտեսության տնտեսական վնասվածքներ կամ վնասների վերականգնում	4841		0.00	0.00	0.00	X	0.00	0.00	X	0.00	0.00	X
4742	- Այլ բնական պատճառներով տնտեսական վնասվածքների վերականգնում	4842		0.00	0.00	0.00	X	0.00	0.00	X	0.00	0.00	X

[illegible]

[illegible]

6120	ԵԱՄԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՔԻ ԻՐԱՅՈՒՄՑ ՄՈՒՏՔԵՐ	8121	0.00	X	0.00	0.00	X	0.00	X	0.00	0.00
6130	ԱՅԼ ՇՈՒՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԻՐԱՅՈՒՄՑ ՄՈՒՏՔԵՐ	8131	0.00	X	0.00	0.00	X	0.00	X	0.00	0.00
6200	ՊԱՇԱՏԱՆԵՐ ԻՐԱՅՈՒՄՑ ՄՈՒՏՔԵՐ (տող6210+տող6220)	X	0.00	X	0.00	0.00	X	0.00	X	0.00	0.00
	այդ թվում՝										
6210	ՊԱՇԱՏԱՆԱԿԱՆ շԱՄՈՑՔԱՅԻՆ ՊԱՇԱՏԱՆԵՐ ԻՐԱՅՈՒՄՑ ՄՈՒՏՔԵՐ	8211	0.00	X	0.00	0.00	X	0.00	X	0.00	0.00
6220	ԱՅԼ ՊԱՇԱՏԱՆԵՐ ԻՐԱՅՈՒՄՑ ՄՈՒՏՔԵՐ (տող6221+տող6222+տող6223)	X	0.00	X	0.00	0.00	X	0.00	X	0.00	0.00
	որից՝										
6221	- Արտադրական պաշարների իրացումից մուտքեր	8221	0.00	X	0.00	0.00	X	0.00	X	0.00	0.00
6222	- Վերականգնողի համար ապրանքների իրացումից մուտքեր	8222	0.00	X	0.00	0.00	X	0.00	X	0.00	0.00
6223	- Ապրանքի համար նախատեսված պաշարների իրացումից մուտքեր	8223	0.00	X	0.00	0.00	X	0.00	X	0.00	0.00
6300	ԲԱՄԶՈՒՄԵՐՔ ԱՎՏՈՎԱԾԻ ԻՐԱՅՈՒՄՑ ՄՈՒՏՔԵՐ (տող 6310)	X	0.00	X	0.00	0.00	X	0.00	X	0.00	0.00
	այդ թվում՝										
6310	ԲԱՄԶՈՒՄԵՐ ԱՎՏՈՎԱԾԻ ԻՐԱՅՈՒՄՑ ՄՈՒՏՔԵՐ	8311	0.00	X	0.00	0.00	X	0.00	X	0.00	0.00
6400	ՉԱՄՏՐԻԿԱՆ ԱՎՏՈՎԱԾԻ ԻՐԱՅՈՒՄՑ ՄՈՒՏՔԵՐ (տող6410+տող6420+տող6430+տող6440)	X	-5 000 000.00	X	-5 000 000.00	-5 000 000.00	X	-5 000 000.00	X	-2 722 410.00	-2 722 410.00
	այդ թվում՝										
6410	ՉՈՒՐ ԻՐԱՅՈՒՄՑ ՄՈՒՏՔԵՐ	8411	-5 000 000.00	X	-5 000 000.00	-5 000 000.00	X	-5 000 000.00	X	-2 722 410.00	-2 722 410.00
6420	ԾԱՏԱԿԱՆ ՇԱՄՈՑՔԻ ԻՐԱՅՈՒՄՑ ՄՈՒՏՔԵՐ	8412	0.00	X	0.00	0.00	X	0.00	X	0.00	0.00
6430	ԱՅԼ ԲԱՄՈՒՆ, ԸՆԳՈՒՄ ՈՐԱՅՈՐ ԶԻՆԱԿԱՆ ՄԱՅՈՒՆՆԵՐ ԻՐԱՅՈՒՄՑ ՄՈՒՏՔԵՐ	8413	0.00	X	0.00	0.00	X	0.00	X	0.00	0.00
6440	ՈՂԼՈՒՑՔԱԿԱՆ ՇԱՄՏՐԻԿԱՆ ԱՎՏՈՎԱԾԻ ԻՐԱՅՈՒՄՑ ՄՈՒՏՔԵՐ	8414	0.00	X	0.00	0.00	X	0.00	X	0.00	0.00

Համալսելի բուժեժի համլետոլի կամ պսկատուլի (ՂԵՖիգիտի) կատարման վերաբերուլ
(02/01/17 - 31/03/17) Թ. Ժամանակահատուժի համար)

[illegible]

ԳՈՐԻՍԻ ՀԱՄԱՅՆՔ

8122	- վարկերի ստացում (տող 8123+տող 8124)	9112	0.00	X	0.00	0.00	0.00	0.00	X	0.00	0.00	0.00	X	0.00
	որից՝													
8123	պետական բյուջեից		0.00	X	0.00	0.00	0.00	0.00	X	0.00	0.00	0.00	X	0.00
8124	այլ աղբյուրներից		0.00	X	0.00	0.00	0.00	0.00	X	0.00	0.00	0.00	X	0.00
8130	- ստացված վարկերի հիմնական գումարի մարում (տող 8131+տող 8132)	6112	0.00	X	0.00	0.00	0.00	0.00	X	0.00	0.00	0.00	X	0.00
	որից՝													
8131	ՀՀ պետական բյուջեին		0.00	X	0.00	0.00	0.00	0.00	X	0.00	0.00	0.00	X	0.00
8132	այլ աղբյուրներից		0.00	X	0.00	0.00	0.00	0.00	X	0.00	0.00	0.00	X	0.00
8140	1.2.2. ֆինասավորություններ (տող 8141+տող 8150)		0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
	որից՝													
8141	- բյուջենային ֆինասավորությունների ստացում (տող 8142+տող 8143)	9112	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
	որից՝													
8142	ՀՀ պետական բյուջեից		0.00	0.00	X	0.00	0.00	0.00	0.00	X	0.00	0.00	0.00	X
8143	ՀՀ այլ համայնքների բյուջեներից		0.00	0.00	X	0.00	0.00	0.00	0.00	X	0.00	0.00	0.00	X
8150	- ստացված ֆինասավորությունների գումարի մարում (տող 8151+տող 8152)	6112	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
	որից՝													
8151	ՀՀ պետական բյուջեին		0.00	0.00	X	0.00	0.00	0.00	0.00	X	0.00	0.00	0.00	X
8152	ՀՀ այլ համայնքների բյուջեներին		0.00	0.00	X	0.00	0.00	0.00	0.00	X	0.00	0.00	0.00	X
8160	2 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ (տող 8161+տող 8170+տող 8190+տող 8201+տող 8202+տող 8203)		0.00	0.00	0.00	99 044 365.90	7 047 219.00	91 997 146.90	-47 610 579.50	-45 492 169.50	-2 118 410.00			

[illegible]

[illegible]

[illegible]



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/04/2017

ՈՐՈՇՈՒՄ N 16-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԻ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14³ հոդվածի 8-9 կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2017թ. մարտի 17-ի N 25 դրական եզրակացությանը և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի /բնակավայրի/ գլխավոր հատակագծում կատարվող փոփոխությունները և համայնքային սեփականություն հանդիսացող 0.37991 հեկտար, այդ թվում՝

ա/ բնակավայրերի նպատակային նշանակության հողերից 0.17795 հեկտար բնակելի կառուցապատման հողամաս.

բ/ գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից 0.20196 հեկտար այլ հողատեսքերից հողամաս.

փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ <<էներգետիկայի օբյեկտների հողեր>> գործառնական նշանակությամբ՝ ջրատնտեսական օբյեկտների /ՕԿԶ-ներ/ շահագործման համար:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0


1. ԱՎԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ

2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ


3. ԴՈԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ




4. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ




5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ




6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ




7. ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ




8. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ



9. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՎԱԶԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ

2017թ. մայիս « 02 »
ք. Գորիս



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

28/04/2017

ՈՐՈՇՈՒՄ N 17-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՍԱՆ ԱՇՈՏԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 24/27 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ 34.4ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՇՈՒՇԻԿ
ԶԵՅՆԱԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ և 66-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ-ի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի բ/ ենթակետը համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Գորիս քաղաքի Գուսան Աշոտի փողոցի թիվ 24 հասցեում Շուշիկ Զեյնալյանին սեփականության իրավունքով պատկանող 31.03 ներքին /34.4քմ արտաքին/ մակերեսով հասարակական շինության /խանութ/ ընդլայնման նպատակով, շինությանը կից համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման գոտում գտնվող Գուսան Աշոտի փողոցի թիվ 24/27 հասցեի 34.4քմ հողատարածքը /ծածկագիր 09-003-0079-0028, վկայական N17022017-09-0023, տրված 17.02.2017թ./, որը հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել հրապարակային սակարկության միջոցով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Շուշիկ Զեյնալյանին, 1քմ հողի գինը՝ 810 դրամ:

2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:


Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԼՈՒՆՑ ՌՈՒՍԱՄ

2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

3. ԴՈԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ 
4. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ 
5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ 
6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ 
7. ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ 
8. ՄԿՐՏՅԱՆ ԱՐՄԵՆ 
9. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՎԱԶԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ

2017թ. մայիս « 02 »
ք. Գորիս





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/04/2017

ՈՐՈՇՈՒՄ N 18-Ա

**ՎԱՐԴԱՆ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԵՎ ԱՐԵԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14³-րդ հոդվածի 9-րդ կետով, համաձայն Գորիս քաղաքի գլխավոր հատակագծի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Գորիս քաղաքի Օրբելյանների փողոցի թիվ 1 հասցեում Վարդան Մինասյանի և Արև Արելյանի սեփականություն հանդիսացող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիայի 0.0462 հեկտար /09-003 կադաստրային ծածկագրով/ արտադրական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ <<բնակելի կառուցապատման հողեր>> գործառնական նշանակությամբ:
2. Գորիս համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ

2. ԱՂԱՔԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

3. ԴՈԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ

4. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

7. ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ

8. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

9. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ՎԱՋԱԳԱՆ ԱՂՈՒՆՑ

2017թ. մայիս «02»
ք.Գորիս



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/04/2017

ՈՐՈՇՈՒՄ N 19-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 8/8 ՀԱՅՅԵՈՒՄ
ԳՏԵՎՈՂ 77.4 ՔՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԳՐԵՏԱ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ և 66-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ-ի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի բ/ ենթակետը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Գորիս քաղաքի Արզումանյան փողոցի թիվ 8/3 հասցեում Գրետա Բադասյանին սեփականության իրավունքով պատկանող հասարակական շինության /առևտրի սրահ/ ընդլայնման նպատակով, շինությանը կից համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման գոտում գտնվող Արզումանյան փողոցի թիվ 8/8 հասցեի 77.4քմ հողատարածքը /ծածկագիր 09-003-0237-0042, վկայական N15022017-09-0006, տրված 15.03.2017թ./, որը հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել հրապարակային սակարկության միջոցով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Գրետա Բադասյանին, 1քմ հողի գինը՝ 810 դրամ:

2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
Կողմ -9
Դեմ -0
Ձեռնպահ -0

1. ԱՎԼՈՒՆՑ ՌՈՒՍԱՄ

2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

3. ԴՈԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ

4. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

7. ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ

8. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

9. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ԿԱԶԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ

2017թ. մայիս « 02 »

ք.Գորիս



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/04/2017

ՈՐՈՇՈՒՄ N 20-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՌԱՆՑ ՄՐՅՈՒՅԹԻ
ԿԱՌՈՒՑԱԴԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>>
Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի
Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 76-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ
կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ.
ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի(ա) ենթակետը,
Հայաստանի Հանրապետության կառավարության 01.06.2006թ. թիվ 1053-Ն որոշումը և
համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության
արդյունքներով, կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի
կառուցապատման գոտում գտնվող Գետափնյա թաղամասում բնակելի շենքերի
հարևանությամբ նախատեսել 1000քմ հողատարածք՝ առանց մրցույթի, յուրաքանչյուրին
մինչև 20քմ հողատարածք կառուցապատման իրավունքով տրամադրել ավտոտնակներ
կառուցելու նպատակով՝ 1 քմ տարեկան վարձավճար սահմանել՝ 400 դրամ:

2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների
իրականացումը:

Կողմ -8

Դեմ -0

Ձեռնպահ -1

1. ԱՎԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ

2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

3. ԴՈԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ

1. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

4. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

7. ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ

8. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱԶԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ

2017թ. մայիս «02»

ք.Գորիս



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/04/2017

ՈՐՈՇՈՒՄ N 21-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Գ.ՏԱԹԵՎԱՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 7/3 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ 282.0ՔՄ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՀԱԳՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով 1-ին կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ, 66-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ-ի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13 կետի գ/ ենթակետը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Վահագ Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Գորիս քաղաքի Գ.Տաթևացի փողոցի թիվ 7/1 հասցեի հասարակական նշանակության օբյեկտի ընդլայնման նպատակով, շինությանը կից համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման գոտում գտնվող Գ.Տաթևացի փողոցի թիվ 7/3 հասցեի 282.0քմ հողատարածքը /ծածկագիր 09-003-0111-0015, վկայական N23042014-09-0029, տրված՝ 23.04.2014թ./, որը հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել հրապարակային սակարկության միջոցով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Վահագն Գրիգորյանին, 1քմ հողի գինը՝ 810 դրամ:

2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -9


Դեմ -0

Ձեռնպահ -0


1. ԱՎԼՈՒՆՑ ՌՈՒՍԱՄ

2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

3. ԴՈԼՈՒՆՑ ԴԱԿԻԹ


- 4. ՀԱՋԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ 
- 5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ 
- 6. ՂԵՎՈՆՂՅԱՆ ՄԱՍԻՍ 
- 7. ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ 
- 8. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ 
- 9. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՎԱՋԱԳԱՆ ԱՂՈՒՆՑ

2017թ. մայիս « 03 »
ք.Գորիս





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

28/04/2017

ՈՐՈՇՈՒՄ N 22-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ՎԵՐԻՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ
ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ, 90-րդ հոդվածների դրույթներով, Հայաստանի Հանրապետության <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 29-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 25-ի թիվ 36-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի <<Վերիշենի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 07.03.2017թ. դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի <<Վերիշենի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը Գորիս համայնքի 2017թ-ի բյուջեի պահուստային ֆոնդից տրամադրել 240 000 /երկու հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ՝ որպես ֆինանսական աջակցություն:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ

2. ԱՂԱՔԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

3. ԴՈԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ


4. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ


6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

7. ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ 

8. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ 

9. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՎԱՋԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ

2017թ. մայիս « 02 »

ք.Գորիս



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

28/04/2017

ՈՐՈՇՈՒՄ N 23-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի <<Հայաստանի Հանրապետությունում արտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին>> N 389 -Ն որոշումը և առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի վարչական տարածքում գտնվող արտավայրերի օգտագործման կարգը՝ համաձայն հավելվածի

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ

2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

3. ԴՈԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ

4. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

7. ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ

8. ՄԿՐՏՁՅԱՆ ԱՐՄԵՆ

9. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՋԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ

2017թ. մայիս « 02 »

ք.Գորիս

Կ Ա Ր Գ

ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են պետական սեփականություն հանդիսացող հողերի վրա գտնվող արոտավայրերի և խոտհարքների կառավարման և արդյունավետ օգտագործման պայմանները:
2. Սույն կարգի նպատակներն ու խնդիրներն են՝
 - 1) Հայաստանի Հանրապետությունում արոտավայրերի և խոտհարքների պահպանության և կայուն ու արդյունավետ օգտագործման գործընթացներին նպաստումը.
 - 2) արոտավայրերի և խոտհարքների բերքատվության բարձրացման և վերականգնման համար նպաստավոր պայմանների ստեղծումը.
 - 3) արոտավայրերի և խոտհարքների որակական բնութագրերի և բնապահպանական վիճակի վատթարացման կանխումը.
 - 4) արոտավայրերի և խոտհարքների սանիտարական վիճակում պահպանության ապահովմանը նպաստելը:
3. Մինչև արոտավայրերի օգտագործումը կազմվում է արոտավայրերի օգտագործման պլան՝ հաշվի առնելով արածեցվող կենդանիների թվաքանակը և արոտավայրերի բերքատվությունը:
4. Արոտավայրերի կայուն և արդյունավետ օգտագործման նպատակով կիրառվում է արոտաշրջանառություն՝ հետևյալ սկզբունքներով՝
 - 1) մինչև արոտային շրջանի սկսվելն ընդհանուր արոտավայրը բաժանվում է առանձին արոտամասերի (արոտաբաժինների), որոնք արածեցվում են որոշակի հերթականությամբ.
 - 2) արածեցման հերթականությունը յուրաքանչյուր տարի փոփոխվում է.
 - 3) նախորդ տարվա վերջին արածեցված արոտամասը հաջորդ տարում չի արածեցվում, թողնվում է «հանգստի»:
5. Արոտային շրջանի սկիզբը և ավարտը սահմանվում է յուրաքանչյուր տարի՝ ելնելով տվյալ տարվա կլիմայական պայմաններից:
6. Արոտային շրջանի տևողությունը հանրապետության ցածրադիր, հարթավայրային և նախալեռնային գոտիներում կազմում է՝ խոշոր եղջերավոր կենդանիների համար՝ 210-240 օր, մանր եղջերավոր կենդանիների համար՝ 270-300 օր, իսկ բարձր լեռնային գոտիներում համապատասխանաբար՝ 150-170 օր և 180-210 օր:
7. Միևնույն արոտատարածքում ամբողջական բոլորապտույտով արածեցումների թիվն ամբողջ արոտային շրջանում սահմանվում է՝
 - 1) կիսաանապատային և չոր տափաստանային գոտիներում՝ 2-3 անգամ.

2) տափաստանային գոտում՝ 3-4 անգամ.

3) մարգագետնատափաստանային և հետանտառային գոտիներում՝ 4-5 անգամ.

4) ենթալայան գոտում՝ 5-6 անգամ.

5) ալայան գոտում՝ 3 անգամ:

8. Կենդանիների արածեցումն սկսվում է գարնանը բույսերի վերաճն սկսվելուց 15-18 օր հետո, երբ արոտավայրում բույսերը հասել են հասունացման, իսկ արոտականաչի բարձրությունը հողի մակերեսից կազմում է՝

1) կիսաանապատային, չոր տափաստանային և ալայան գոտիներում՝ 6-8 սմ.

2) տափաստանային գոտում՝ 10-12 սմ.

3) մարգագետնատափաստանային, հետանտառային և ենթալայան գոտիներում՝ 12-15 սմ բարձրություն:

9. Մեծ թեքություններում (15° և բարձր), որտեղ առկա է հողատարման (էրոզիա) վտանգ և բուսածածկը համեմատաբար թույլ է, արածեցումը կատարվում է սահմանված ժամկետից 10-12 օր անց:

10. Կենդանիների արածեցման համար հատկացվող արոտատարածքի մակերեսը սահմանվում է՝ ելնելով արոտային թույլատրելի բեռնվածությունից:

11. Արոտային թույլատրելի բեռնվածությունն արտահայտվում է մեկ հեկտարի վրա տեղաբաշխվող պայմանական անասնազլխաքանակով և որոշվում հետևյալ բանաձևով՝

$$ԱԹԲ = \frac{Բ}{\eta \times S},$$

որում՝

ԱԹԲ-ն՝ արոտավայրի թույլատրելի բեռնվածությունն է,

Բ-ն՝ 1 հա արոտավայրի բերքատվությունն է (խոնավ արոտականաչի զանգվածը), կգ/հա,

η -ն՝ 1 պայմանական անասնազլխաքանակի օրվա արոտակերի պահանջն է՝ կգ,

S-ն՝ արոտային շրջանի տևողությունը՝ օրերով:

12. Արոտային բեռնվածության որոշման նպատակով մեկ պայմանական կենդանու զլխաքանակին տարբեր գյուղատնտեսական կենդանիները հավասարեցվում են հետևյալ գործակիցներով՝

1) կով, արտադրող ցուլ՝ 1.0.

2) խոշոր եղջերավոր կենդանիների սեռահասակային այլ խմբերի կենդանի՝ 0.66.

3) մանր եղջերավոր կենդանի՝ 0.1:

13. Մեկ պայմանական զլխաքանակի համար ամբողջ արոտային շրջանում անհրաժեշտ արոտատարածքը կազմում է՝

1) կիսաանապատային գոտում՝ 6-7 հա.

2) տափաստանային գոտում՝ 2-2.5 հա.

3) մարգագետնատափաստանային և հետանտառային գոտիներում՝ 1.5-1.7 հա.

4) ենթալայան գոտում՝ 1-1.2 հա.

5) ալայան գոտում՝ 2-2.5 հա:

14. Արածեցման արդյունավետ եղանակը հերթափոխային (համակարգված) արածեցումն է, որի կիրառման համար արոտատարածքը պետք է բաժանել արոտավանդակների, որոնց մեծությունը 100 պայմանական անասնազխաքանակ ընդգրկող նախրի համար կազմում է՝

- 1) կիսաանապատային և չոր տափաստանային արոտավայրերում՝ 40-60 հա.
- 2) տափաստանային արոտավայրում՝ 20-40 հա.
- 3) մարգագետնատափաստանային և հետանտառային արոտավայրերում՝ 20-30 հա.
- 4) ենթալպյան և ալպյան արոտավայրերում՝ 10-20 հա:

15. Հերթափոխային (համակարգված) արածեցման դեպքում ընդհանուր արոտատարածքը բաժանվում է հետևյալ թվով արոտավանդակների՝

- 1) ալպյան գոտում՝ 8-10.
- 2) ենթալպյան գոտում՝ 10-12.
- 3) մարգագետնատափաստանային և հետանտառային գոտիներում՝ 12-16.
- 4) տափաստանային գոտում՝ 16-20.
- 5) կիսաանապատային և չոր տափաստանային գոտիներում՝ 20-40:

16. Արոտավանդակներն առաջինից մինչև վերջինը, ըստ տեղադրվածության, արածեցվում են սահմանված հերթականությամբ՝ մինչև բոլոր արոտավանդակների արածեցման ավարտը, որից հետո կենդանիները դարձյալ փոխադրվում են առաջին արոտավանդակ և սկսվում է արածեցման հաջորդ բոլորապտույտը՝ ըստ հերթականության:

17. Արածեցված արոտավայրերում բույսերի կայուն վերաճ ապահովելու նպատակով արածեցման երկրորդ բոլորապտույտը պետք է սկսել առաջին բոլորապտույտի ավարտից 20-25 օր հետո, հաջորդ բոլորապտույտները՝ 35-40 օր անց, իսկ արոտավանդակներում արածեցման տևողությունը պետք է կազմի առաջին բոլորապտույտում՝ 2-3 օր, հաջորդ բոլորապտույտներում՝ 3-5 օրից ոչ ավելի:

18. Արոտավայրերում կենդանիների մակատեղերը (գիշերավայրը) պետք է կառուցել՝ ջրելատեղերից 300-500 մ հեռավորության վրա:

19. Ջրելատեղերի հեռավորությունն արոտավայրից պետք է լինի հետևյալ հեռավորության վրա՝

- 1) կթու կովերի համար՝ 1-1.5 կմ-ից ոչ ավելի.
- 2) բովոզ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների համար՝ 1.5-2.5 կմ-ից ոչ ավելի:

20. Արոտավանդակների սահմանազատման նպատակով, որպես բնական սահմաններ, կարող են ծառայել արոտատարածքում առկա ձորակները, գետակները, հեղեղատները, թեթությունները, բացատները, թփուտները, ճանապարհները, իսկ դրանց բացակայության դեպքում անհրաժեշտ է օգտագործել շարժական ցանկապատեր, որոնցից առավել արդյունավետ են էլեկտրացանկապատերը:

21. Բնական խոտհարքներն օգտագործման են տրամադրվում խոտհնձի նպատակով: Խոտհնձի լավագույն ժամկետ է սահմանվում բուսածածկում գերակշռող արժեքավոր հացազգի (դաշտավուկազգի) խոտաբույսերի հասկակալումից մինչև ծաղկման, իսկ թիթեռնածաղկավոր (բակլազգի) խոտաբույսերի դեպքում՝ կոկոնակալումից մինչև ծաղկման փուլն ընկած ժամանակաշրջանը:

22. Բնական խոտհարքներում խոտհունձն իրականացվում է 7-10 օրվա ընթացքում, երբ խոտի բարձրությունը հողի մակերեսից կազմում է 4-6 սմ:

23. Բնական խոտհարքներում յուրաքանչյուր երրորդ տարում խոտհունձն իրականացվում է խոտհնձի սեզոնի վերջում՝ բույսերին սերմնակալման և բնական վերարտադրության հնարավորություն ընձեռելու նպատակով:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

28/04/2017

ՈՐՈՇՈՒՄ N 24-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի <<Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին>> N 1477-Ն որոշումով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային արոտների վարձավճարի չափը սահմանել տվյալ արոտավայրի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ

2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

3. ԴՈԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ

4. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

7. ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ

8. ՄԿՐՏՁՅԱՆ ԱՐՄԵՆ

9. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՋԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ

2017թ. մայիս « 02 »

ք. Գորիս



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

28/04/2017

ՈՐՈՇՈՒՄ N 25-Ա

**<<ԳՈՐԻՍԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 24-րդ կետով, հիմք ընդունելով <<Գորիսի համայնքների միություն>> հասարակական կազմակերպության գործադիր տնօրենի 2017թ-ի ապրիլի 4-ի գրությունը և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքին <<Գորիսի համայնքների միություն>> հասարակական կազմակերպությանն անդամակցելուն:

2.<<Գորիսի համայնքների միություն>> հասարակական կազմակերպությանը փոխանցել անդամության վճար՝ տարեկան 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԼՈՒՆՑ ՌՈՒՍԱՍ

2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

3. ԴՈԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ

4. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

7. ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ



8. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ



9. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՎԱՋԱԳԱՆ ԱՂՈՒՆՑ

2017թ. մայիս «02»

ք. Գորիս



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

28/04/2017

ՈՐՈՇՈՒՄ N 26-Ա

**«ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏԱՐԱԾՔ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ, 35-րդ հոդվածներով, <<Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով և հավելված 2-ով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 10-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. << Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Որոտան Գյուղի 3 փողոցի թիվ 1 հասցեի վարչական շենքից (վկայական՝ թիվ 03092013-09-0018, կադաստրային ծածկագիր՝ 09-077-0008-0063) 42.2 քմ ընդհանուր մակերեսով 2 սենյակ (համաձայն սխեմայի) վարձակալությամբ տրամադրել <<Արմենտել>> փակ բաժնետիրական ընկերությանը՝ 5 տարի ժամկետով, տարածքի վարձակալության վճարի չափը սահմանել ամսական 45.000 /քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ

2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

3. ԴՈԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ

4. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

7. ՄԱՔՈՒՆՅ ՍԱՄՎԵԼ

8. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

9. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՋԱԳԱՆ ԱԴՈՒՆՅ

2017թ. մայիս « 02 »

ք.Գորիս